Զապել Եսայան

Դեպի Կիլիկիա

Շոգենավը կտաներ մեզ դեպի Կիլիկիո նավահանգիստը, և այն վերջին գիշերը որ կանցկացնենք Միջերկրականի մեջ, զիս արհավիրքով, կանխակալ սարսափով կլցներ: Հետզհետե քանի կմոտենայինք աղետի սեմին, իրականությունը կխուսափեր կարծես իմ հասկացողութենես ու չէինք կարող անկեղծորեն հավատալ, թե վաղն առավոտ Մերսին պիտի հասնինք. Ադանա… Կիլիկիա…: Շաբաթներե ի վեր այդ անունները կկարդային մեր ուղեղին մեկ անկյունը, հոն՝ արյունոտ վերք մը կար, որու դպչիլը ցավագին սարսուռով մը կցնցեր էությունդ:

Գաղջ և հեշտավետ մթնոլորտ մը կպարուրեր մեզ. աստղազարդ երկնքի տակ Միջերկրականը կվետվետեր իր մութ կապույտ ալիքներով, որոնք մեղմորեն կօրորեին շոգենավն առանց զայն ցնցելու: Բնության պայծառ և անհեղլի գեղեցկության ու մեր միտքերը տանջող մտածումներուն մեջ այնպիսի հակասություն մը կար, որ տպավորություններս կերթևեկեին մեկեն մյուսը՝ առանց պահ մը կանգ առնելու, և ասիկա այնքան հոգնեցուցիչ կդառնար, որ գրեթե ֆիզիկական ցավ կպատճառեր:

Աղետին կուրծքին մեջ իսկ մխրճվելու գաղափարը տխրագին անհամբերություն մը կպատճառեր մեզի ու թեև լուռ, կպտտեինք մինչև ուշ ատեն շոգենավին կամրջակին վրա՝ առանց իրարու մեր զգացումները հաղորդելու՝ համոզված էի, որ նույն տենդոտ հետաքրքրությունը գրաված էր ամենուն միտքերը: Հոն կային թուրքեր ու հայեր. Պատրիարքական երկրորդ պատվիրակությունը և պատերազմական Բ Ատյանի անդամները կճամփորդեին նույն շոգենավով.

կային նաև վնասված վաճառականներ, արկածյալներու ազգականներ, որոնք ավերակներու վրա կփութային աչքովնին հաստատելու համեմատությունը:

Մինչև ուշ ատեն մնացինք կամրջակին վրա: Կեսգիշերն անցած էր: Վարը՝ երրորդներու վրաններեն երբեմն կլսվեին սրտագին հառաչանքներ, վերը շոգենավին լուսավորության ծառայող լապտերներու տժգույն ցոլքին մեջ կտեսնվեր երբեմն հայ կրոնավորի մը սև գտակը . զինվորականներ խմբովին կպտտեին, ու երբ ինծի կմոտիկնային՝ կցկտուր բառեր կհասնեին ականջիս.

— Քանի Մերսինի կմոտիկնանք, սիրտ կայրի անբացատրելի ցավով մը:

Վարեն՝ ճամփորդի մը հառաչանքը կարծես կպատասխաներ այս խորհրդածության:

Երբ առանձնացա իմ խցիկիս մեջ, հետզհետե ավելի ուժգնությամբ վաղվան հայտնվելիք իրականության դողովը պաշարվեցա: Կարծես մինչև այն ատեն ինծի անծանոթ լույսով մը բոցավառված էր իմ ներքին էությունս, որ փոխանակ պայծառությամբ երևան բերելու և ձևակերպելու բոլոր մտածումներս, ընդհակառակը, միգապատ շփոթության մը մեջ կխառնակեր զանոնք, ու բոլոր այս տենդագին տրտմության մեջ մեկ պատկեր մը թեև պատառոտուն՝ բայց համառորեն կվերադառնար հիշողությանս:

Երկու ամիս առաջ, Կարմիր Խաչի ընկերուհիներ և ընկերներ կմեկնեին Կալաթաեն: Առաջինները…: Հարատև անձրև մը կուլար քաղաքին վրա: Ստամբուլը ծածկված էր գորշագույն և խոնավ մեգի մը մեջ և անսահմանելի տխրություն մը կարտաշնչվեր ամեն բանե. մեր ետևը քարափի սրճարաններեն տարփավետ և մելամաղձոտ երգեր կերկերաձայն կբարձրանային՝ ցավի ուժգին և հեծեծող աղաղակներու պես: Ամենքս ալ տժգույն էինք մեռելներու նման և իզուր կջանայինք ժպտիլ մեկնողներուն: Նավակը կբացվեր… մայր մը կար հոն, ճակատը կճերմկեր հետզհետե հեռավորության մեջ, ու մեր քով իր դեռատի աղջիկը ջղաձգորեն կժպտեր՝ ուզելով ծածկել իր մատղաշ հոգիին բոլոր չարչարանքը: Այդ դարչագույն մեգին մեջ ճերմկող և անհետացող մոր ճակատը, այդ քարափի սրճարաններեն դուրս խուժող հեծեծագին եղանակները, անձրևին մրմունջն անգութ և հեշտավետ ոստանին վրա, իրարու հետ խառնված այնպիսի

զգացումով մը կվերացնեին հոգիս, որ գլխու պտույտ կպատճառեր ու ծունկներս կթոտեին: Վերադարձին ամենքս ալ մտամփոփ և տրտում էինք, ու ես կտեսնեի կարմիր մոձավանջի մը մեջ հրդեհված քաղաքը, հեռավոր փախստականները, սգավոր և նախատված աղջիկները, ու կախաղաններ, կախաղաննե՛ր…

Ու ինչ-որ հեռավոր մոձավանջ մըն էր այն օրը, այսօր, քանի մը ժամ ետքը, իմ մթնոլորտս պիտի կազմեր…

Շոգենավը կկենար: Անմիջապես բարձրացա կամրջակին վրա: Կկարծեի, թե առաջինը պիտի ըլլամ, բոլորն ալ հոն էին սակայն: Հիվանդագին տժգնություն մը կար ամենուն դեմքերուն վրա ու քնատութենե մարած աչքեր կզգուշանային իրարու հանդիպելու: Զինվորականները խումբ մը կկազմեին մեկ կողմ ու երկա՛ր, վհատած աչքերով կնայեին Մերսինի վրա: Պատվիրակության կրոնավոր անդամներեն մեկը, իր սև թավիշե գտակին ներքև ճերմկած դեմքը կդարձներ Կիլիկիո, ու վշտագին ծամածռությունները կխորշոմեին զինքը:

Նույն միջոցին նավեր կփութային դեպի մեզ, զինվորականները կաճապարեին իջնալու. խուսափուկ նայվածքներով կանցնեին մեր դիմացեն ու տխրությամբ ու արագորեն կբարևեին, քայլերնին անհաստատ էր ու կարծես շվարած, սուրերուն ձայնը կքաշքշեր գետնին վրա: Այդ րոպեին դժվար էր որոշել որ իրե՞նք թե մենք ավելի դժբախտ կզգայինք ինքզինքնիս:

Մերսին մեր դիմացն էր: Տափարակ և կապտորակ հողի տարածությունը կհեռանար մինչև մշուշապատ լեռներու շղթան, արարչալույսին գույներու բազմազան երանգավորում մը կծածաներ հույլորեն այդ գեղջկական պարզության վրա: Անգամ մըն ալ աղետին մոձավանջը կհեռանար իմ մտքես և կուզեի ժպտիլ այդ արեգնավետ երկնքին…: Բայց ահավասիկ պատվիրակությանը պատրաստ կսպասեր, և նավերը կմոտիկնային. անձկալի ու մռայլ դեմքեր կնայեին մեզի, կորոնեին ու ամեն բան կմթներ իմ մեջս…: Կրոնականները, հանդիսավոր և ծանր երևույթով, կարծես հուղարկավորության մը կպատրաստվեին: Մեր ամենուս տժգնությունը կավելնար, սիրտս բռնված էր անսահման վշտի մը մեջ ու երակներս կսառեին կարծես:

Եկեր էին մեզի դիմավորելու անոնք, որ տեսած էին ամեն բան… հրդեհե, սուրե փախած էին ոմանք, իրենց աչքերուն մեջ բոցերուն ելևէջը կպարեր, ու հիշատակներու դառնությունը շփոթ արագություն մը կուտար իրենց խոսքերուն…: Այդ քանի մը վայրկյանին մեջ շատ բան պատմեցին ու շատ բան ըսին մեզի, ու հակառակ մեր անսահման հուսահատության՝ մեր խոսքերն անիմաստ լավատեսությամբ մը լեցուն կթվեին իրենց: Գլուխնին կշարժեին ու կըսեին.

- Ինչպես հայտնի է, որ դեռ շոգենավին վրա կգտնվիք:

Երբ Մերսին ոտք դրինք, տպավորությունս շատ որոշ էր: Կարծես մեռելի մը տան սեմեն ներս կմտնեինք, մարդիկ մեզ կընդունեին լռին տխրությունով մը. ձեռքերնիս կսեղմեին ու կանցնեին, ու դեռ ո՞վ գիտե ի՞նչ մը կար օտարոտի մեր վրա, որ հաղորդակցության չէին մտնար ու ամրապնդված իրենց վշտին մեջ՝ մեկ կողմ կկենային ու կնայեին մեզի արցունքոտ աչքերով:

Պանդոկը, ուր իջևանեցանք, լեցուն էր ամեն աստիճանե փախստականներով. հոն գտանք նաև Վեհափառը, որուն ներկայացանք անմիջապես: Ամբողջ օրը կարծես մղձավանջային երազի մը մեջեն տեսա անցուդարձը սևազգեստ կիներու - առաջին զոհերեն մեկուն ընտանիքի անդամները - ու լաց ու կոծն արկածյալներու, որբերու և այրիներու, որոնց վիշտը կհրահրվեր մեր երևույթեն:

Հետևյալ օրը պիտի մեկնեինք Ադանա՛… պիտի ըլլայինք ավերակներու մեջ. խելահեղորեն կմտածեի այդ բանին ու այն գիշերն ալ անքուն ու սրտատրոփ հսկեցի վշտիս վրա:

Հիշերը զով էր, ծովին լայն տարածութենեն խոնավությունը կբարձրանար, կսավառներ քնած քաղաքին վրա: Ալիքներուն մռնչյունը կօրորեր իմ մտահոգությունս, մինչ անընդհատ, ամրաքայլ ուղտերու քարավաններ կանցնեին ճամփուն վրայեն՝ իրենց ելևէջող շարժումները նշանակելով բոժոժներու հնչյուններով: